

ԿՈՄԻՏԱՍՅԱՆ ՀԱՆՃԱՐԻ ՆՈՐՈԳ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Գիրքը կոչվում է «Կոմիտասի հանճարը»։ Հնարավոր է անտարբեր լինել։ Եվ անմիջապես խորասուզվում ես գրքի էջերի մեջ, որոնք կարդացվում են մեծ հետաքրքրությամբ, որովհետև կոմիտասյան հանճարի բացահայտման յուրահատուկ, միայն Թորգոմ արքեպ. Մանուկյանին պատկանող փորձ է։

Երաժշտաներ սրբապանը գրքի բացատրականում համեստորեն խոստովանում է. «Ոչ բեմական երգիչ եմ, և ոչ երաժշտական տեսաբան», բայց ամբողջ գրքում սփռված ճիգը և այդ ճիգի արդյունք հանդիսացող գիրքը վկայում են այն մասին, որ հեղինակ սրբապանը կարողացել է վերարտադրել կոմիտասյան երգի հմայքը և՛ իբրև «բեմական երգիչ»՝ մանրամասնորեն նկարագրելով յուրաքանչյուր երգի ձայնեղևներն ու արտահայտչական նրբությունը, և՛ իբրև «երաժշտական տեսաբան»՝ քննելով տվյալ երգը կոմիտասյան երգերի հյուսվածքում և հայ ժողովրդական երգի հոլովության ու արտահայտչական մթնոլորտի մեջ ընդհանրապես։

Նախ ընթերցողը համառոտ կերպով տեղեկանում է Կոմիտաս Վարդապետի կենսագրությանը։ Եվ այստեղ հեղինակ սրբապանը հատուկ կարևորություն է տվել Կոմիտասի եկեղեցական լինելու հանգամանքին, Գևորգյան ճեմարանի մթնոլորտին և Էջմիածնի Մայր տաճարին, ուր Կոմիտաս Վարդապետը աճեց իբրև երաժիշտ և հաղորդվեց հայ երաժշտության անաղարտ ակունքներին։ Հայ ձայնին ավելացավ հայ հոգևոր ընկալումը և բյուրեղացավ կոմիտասյան հանճարի հայկական անխաթար երգի զգացողությունը, որը դարձավ երաժշտական տեսություն՝ զատորոշելու պուտ հայկականը հարևան, երբեմն նմանակ երաժշտական ոլորտում, և սահմանելու հայկական երաժշտության օրենքն ու օրինաչա-

փությունը՝ ի տարբերություն եվրոպական երաժշտության. եվրոպացությունը մեկ է. «Հայը ինքնուրույն երաժշտություն ունի»։ Ճիշտ է Թորգոմ արքեպիսկոպոսի և այն հաստատումը, որ Կոմիտասի երաժշտական որոնումները ինքնանպատակ չէին. «Կոմիտաս Վարդապետի նպատակը եղած է նաև հայ երաժշտության միջոցով ազգային ինքնագիտակցություն արթնցնել»։ Եթե նկատի ունենանք ժամանակաշրջանի հայ գեղարվեստական մտքի ընդհանուր ուղղվածությունը՝ Դանիել Վարուժանի հեթանոս երգերից մինչև հացի երգը, Լևոն Շանթի հին աստվածներից մինչև Սիամանթոյի հերոսի երգելով մեռնելու վճռականությունը, ապա հատուկ կարևորություն է ստանում Կոմիտասի ջանքը՝ հայ երգով հայ ժողովրդին հույս ու հավատ ներշնչելու սեփական արժեքի ու սեփական ուժի նկատմամբ։ Կոմիտաս Վարդապետի այս դերի բացահայտումը հավելյալ արժեք է հաղորդում Թորգոմ արքեպ. Մանուկյանի գրքին, քանի որ գիրքը հրատարակվել է Ամերիկայում առաջին հերթին ամերիկահայ երիտասարդության մեջ սեր և գիտակցություն արթնացնելու Կոմիտասի գործի և Կոմիտասի հանճարի միջոցով մայր ժողովրդի երաժշտական արվեստի և գեղագիտական ոգու նկատմամբ։ Այս իմաստով «Կոմիտասի հանճարը» գիրքը ամբողջապես ծառայում է իր նպատակին, հատկապես որ հեղինակ սրբապանը օգտակար մտածումն է ունեցել դնել նաև կոմիտասյան երգերի ձայնանիշերը, որպեսզի ընթերցողն ու գանկացողը անմիջականորեն հաղորդվեն հայ երգի հմայքին և պետք պզան յուրացնել այն և տարածել։

Ապա վերլուծվում են Կոմիտաս Վարդապետի երաժշտական գործունեության ոլորտները՝ Կրոնական երգեր, Մանկական երգեր, Բնության երգեր, Հայրենասիրական երգեր,

Հերոսական երգեր, Երգիծական երգեր, Պարեր ու պարերգեր, Հարսանեկան երգեր, Սիրո երգեր, Պանդուխտի երգեր, Թատերական երգեր և Աշխատանքի երգեր: Այս բոլոր ենթագույններում հեղինակ սրբապանը որոշակի երգի ու եղանակի օրինակով տալիս է ի՛ր մտածումները, կոմիտասյան երգի ի՛ր ընկալումը, որ հաճախ դառնում է գերապանցապես անհատական և շոշափելի այնքան, որ երգչի և ղևառմասիրտղի համար մեկնաբանության նոր աղբյուր կարող է լինել:

Հետո հետևում են վերլուծված (և ոչ միայն վերլուծված) երաժշտական կտորների ձայնանիշերը ըստ վերոհիշյալ գլխակարգման: Հայերեն կարդալ չիմացող երաժշտասերը նույնպես կարող է օգտվել երգերի բառային տարալից, որովհետև նոտաների տակ բառերը հայերենից բացի գրված են նաև անգլերեն տառադարձումով, կա շատ երգերի ֆրանսերեն թարգմանությունը՝ ըստ «Կոմիտաս Վարդապետի բարեկամների կոմիտեի» հրատարակությունների:

Գրքին առավել հմայք են պարգևում Գրի-

գոր Խանջյանի՝ Պարույր Սևակի «Անյունի Չանգակատուն» պոեմի ձևավորման համալսողծված նկարները, որոնք օգտագործված են մեծ հմտությամբ ու ճաշակով: Հուպական են նաև Կոմիտասի կենսագրության ու կյանքի այս կամ այն դրվագի հետ կապված լուսանկարները:

Սեդանի վրա է գրավիչ, օգտաշատ և արժեքավոր մի գիրք, որ արգասիքն է Թորգոմ արքեպ. Մանուկյանի հոգու ձայնի. ձայնը հնչեղ է և վկայում է, որ այդ հոգին շատ կենսունակ է. ուրեմն հույս ունենանք, որ այն կլինի նաև արդյունավոր, և մենք կծանոթանանք հեղինակ սրբապանի բեղմնավոր մտքի ու գրչի նոր արդյունքներին:

Հավարտ մեր խոսքի այս գրքի առիթով Թորգոմ արքեպ. Մանուկյանի հետ ձայնակցաբար կրկենք. «Եւ այս է Կոմիտասը, հանձարը հայուն, և այն յաւերժօրէն պիտի ապրի ծոցին մէջ իր ժողովուրդին անմեռ հոգիին»:

Ե. ՄԵԼՔՈՆՅԱՆ

